ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

SUSTAINABLE DEVELOPMENT PROGRAM

ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Համակարգող խորհրդի նիստի

Արձանագրություն N 1

Երևան
«21» օգոստոսի, 2009թ.

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Տիգրան Սարգսյան	ՀՀ վարչապետ, խորհրդի նախագահ
Արմեն Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար
Մուշեղ Թումասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Տիգրան Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Գևորգ Մալխասյան	ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Գևորգ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Արմեն Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Արամ Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Գերասիմ Ալավերդյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ալեքսանդր Ղուկասյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Արմինե Բաբայան	ԿԶԾ Քաղաքացիական համագործակցության ցանցի խորհրդի նախագահ
Սուսաննա Սարգսյան	Տնտեսական զարգացման ոլորտային խմբի անդամ
Գագիկ Մակարյան	Գործարարության, ձեռնարկատիրության, զբաղվածության հարցերի և աշխատավորների շահերի պաշտպանության ոլորտային խմբի անդամ
Նունե Պեպանյան	Համայնքային և համաչափ տարածքային զարգացման հիմնախնդիրների ոլորտային խմբի անդամ
Լևոն Ներսիսյան	Հատուկ կարիքներով բնակչության հիմնահարցերի ոլորտային խմբի անդամ
Մելիտա Հակոբյան	Մարդու իրավունքների ոլորտային խմբի անդամ
Կարինե Դանիելյան	Բնապահպանության հարցերի ոլորտային խմբի անդամ
Քնարիկ Մալխասյան	Կանանց, երեխաների և երիտասարդության հիմնահարցերի ոլորտային խմբի անդամ
Հրաչիկ Ջավադյան	Գյուղատնտեսության և գյուղի զարգացման հիմնախնդիրների ոլորտային խմբի անդամ

Արտակ Բաղդասարյան	ԿԶԾ քարտուղարության ղեկավար, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՀՐԱՎԻՐՎԱԾՆԵՐ

Նինկե Օմես	Արժույթի միջազգային հիմնադրամի մշտական ներկայացուցիչ Հայաստանում
Ռաուլ դե Լյուցենբերգեր	Դեսպան, Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավար
Իրինա Մովսիսյան	Եվրոպական հանձնաժողով,ծրագրերի ղեկավար
Վարդուհի Սարգսյան	Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավարի օգնական, քարտուղար
Ռոլֆ Բիոնկե	Եվրամիության խորհրդատվական խմբի ղեկավար
Վոլֆգանգ Շաֆթ	Գերմանական տեխնիկական համագործակցության հայաստանյան գրասենյակի ավագ փորձագետ,ԱՀՌԾ պատասխանատու
Հովհաննես Ազիզյան	Գերմանական տեխնիկական համագործակցության հայաստանյան գրասենյակի ավագ փորձագետ,ԱՀՌԾ տեղական համակարգող
Կարինե Սիմոնյան	Գերմանական տեխնիկական համագործակցության հայաստանյան գրասենյակի փորձագետ
Սեդա Համազասպյան	Գերմանական տեխնիկական համագործակցության հայաստանյան գրասենյակի թարգմանիչ
Դիրկ Բոբերգ	Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ
Գոհար Գյուլումյան	Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի տնտեսագետ
Սարգիս Սեդրակյան	Քաղաքացիական համագործակցության ցանցի Խորհրդի փոխնախագահ
Վարսենիկ Մնացականյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Գերմանական տեխնիկական համագործակցություն, ԿԶԾ մոնիթորինգի գնահատման միավոր
Եվա Ալեքսանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,ԿԶԾ քարտուղարություն

ՕՐԱԿԱՐԳ

1. ԿԶԾ հավելված հանդիսացող «2010-2011թթ. Քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրի» իրականացման առաջարկի քննարկում /ներկայացնող Մուշեղ Թումասյան/
2. ԿԶԾ աշխատանքային խմբի անհատական կազմի և աշխատակարգի հաստատում /ներկայացնող Մուշեղ Թումասյան/
3. Պետական կառավարման մարմինների կոլեգիալ խորհրդակցական մարմիններում քաղաքացիական համագործակցության ցանցի ներկայացուցիչների ներգրավում /ներկայացնող Արմինե Բաբայան/
4. Այլ հարցեր

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Նիստի բացում՝

Մասնակիցներին ողջունեց ՀՀ վարչապետ, Համակարգող խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը: Խորհրդի նիստին մասնակցում էին խորհրդի անդամների 2/3-ից ավելին, ուստի նիստը համարվեց իրավազոր:

Քարտուղարության կողմից ներկայացված օրակարգը հաստատվեց միաձայն՝ նախատեսելով նաև երկու լրացուցիչ հարցերի քննարկում:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

ՀՀ էկոնոմիկային նախարարի տեղակալ Մուշեղ Թումասյանը ներկայացրեց ԿԶԾ հավելված հանդիսացող «2010-2011թթ. Քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրի» իրականացման առաջարկը՝ հիմնավորելով փաստաթղթի անհրաժեշտությունը, նախանշելով հիմնական ուղղությունները, բովանդակային ձևաչափը, ժամանակացույցը և կազմակերպական կառուցվածքը:

Հարցադրումներով հանդես եկան **ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գևորգ Պետրոսյանը՝** կապված 2010, 2011 թվականների պետական բյուջեների պլանավորման գործընթացում նախատեսվող փաստաթղթի դերակատարման, Կայուն զարգացման ծրագրի և նախատեսվող փաստաթղթի փոխառնչության հետ:

ՔՀՑ խորհրդի նախագահ Արմինե Բաբայանը հարց բարձրացրեց փաստաթղթի մշակման ընթացքում հանրային քննարկումների կազմակերպման անհրաժեշտության և դրա ձևաչափի վերաբերյալ:

ՀՀ էկոնոմիկային նախարարի տեղակալ Մուշեղ Թումասյանը, պատասխանելով հնչեցված հարցերին, նշեց, որ փաստաթուղթը հիմք կծառայի 2011 թվականի բյուջեի համար:

Ի պատասխան Գևորգ Պետրոսյանի հարցին՝ Մուշեղ Թումասյանը նշեց, որ ,քանի որ հնարավոր չէր վերանայել ԿԶԾ-ն ամբողջությամբ, փորձ է արվել դրան կցել «2010-2011թթ. Քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրերի» հավելվածը, որը ժամանակավորապես կփոխարինի ԿԶԾ-ին և կարտահայտի հիմնական ուղղությունները: ԿԶԾ-ի վերանայված փաստաթղթում կներկայացվեն հիմնական բարեփոխումների ուղղությունները, իսկ նպատակային ցուցանիշները, ինդիկատորները կներառվեն «2010-2011թթ. Քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրում»: Վարչապետ Տիգրան Սարգսյանն ավելացրեց, որ Կայուն զարգացման ծրագիրը կլինի ուղեցույց, իսկ վերոնշյալ փաստաթուղթը՝ դրա կիրառման առավել գործնական տարբերակը, որը բխում է ծրագրի հիմնական սկզբունքներից:

Ի պատասխան ՔՀՑ խորհրդի նախագահ Արմինե Բաբայանի հարցին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալը փաստեց, որ փաստաթուղթը նախատեսում է հանրային մասնակցություն: Վարչապետ Տիգրան Սարգսյանն ավելացրեց, որ կապահովվի հասարակական կազմակերպությունների մասնակցությունը:

ՀՀ Վարչապետ, համակարգող խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանն ամփոփեց քննարկման արդյունքները՝ Համակարգման խորհրդին առաջարկելով հավանություն տալ «2010-2011թթ. Քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրի» իրականացման առաջարկին:

<u>Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ</u>

ՀՀ էկոնոմիկային նախարարի տեղակալ Մուշեղ Թումասյանը ներկայացրեց Կայուն զարգացման ծրագրի իրականացման ընթացիկ աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կազմի և աշխատակարգի նախագիծը՝ հիշատակելով Սոցիալական գործընկերության համաձայնագրի դրույթները ԿԶԾ իրականացման կառավարման համակարգի, կառավարման մարմինների ձևավորման սկզբունքների, աշխատանքային խմբի խնդիրների և գործառույթների վերաբերյալ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գևորգ Պետրոսյանն առաջարկեց աշխատանքային խմբում ընդգրկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արտեմ Ասատրյանին:

ՔՀՑ ներկայացուցիչ Կարինե Դանիելյանը հարց բարձրացրեց աշխատանքային խմբում բնապահպանության նախարարության և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների ընդգրկման վերաբերյալ:

ՀՀ Վարչապետ, համակարգող խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը, ընդգծելով աշխատանքային խմբի ձևավորման այն սկզբունքը, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների թվաքանակը պետք է գերազանցի կառավարության ներկայացուցիչների թվաքանակին, համոզվածություն հայտնեց, որ ՔՀՑ բնապահպանական ոլորտային խմբի, ՔՀՑ համայնքային և համաչափ տարածքային զարգացման ոլորտային խմբի ներկայացուցիչների, ինչպես նաև ՀՀ տարածքային նախարարի տեղակալ Վ. Տերտերյանի ընդգրկվածությունը կապահովի համապատասխան բնագավառների ներկայացվածությունը:

<u>Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ</u>

ՔՀՑ խորհրդի նախագահ Արմինե Բաբայանը ներկայացրեց ՀՀ նախարարություններում և գերատեսչություններում քաղաքականության մշակման կոլեգիաների կազմում ԿԶԾ աշխատանքային խմբի ոչ կառավարական մարմինների անդամներին և Բանակցային խմբերի ներկայացուցիչների ընդգրկելու խնդիրը՝ հիմնավորելով ԿԶԾ Սոցիալական գործընկերության համաձայնագրով համապատասխան դրույթի պահանջով: Առաջնորդվելով համաձայնագրի դրույթներով՝ ՔՀՑ խորհրդի նիստում ոլորտային բանակցային խմբերի կողմից առաջադրվել են թեկնածուներ՝ համապատասխան ոլորտային նախարարությունների քաղաքականությունների մշակման կոլեգիաներում ընդգրկելու համար:

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Արմեն Գևորգյանն առաջարկեց հստակեցնել բարձրացված խնդրի նպատակը՝ հաշվի առնելով մասնավորապես այն հանգամանքը, որ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կոլեգիաներում արդեն իսկ ընդգրկված են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

ՔՀՑ խորհրդի նախագահ Արմինե Բաբայանը պարզաբանեց, որ հիշատակված համաձայնագիրը հստակ նախատեսում է կոլեգիալ մարմիններում ընդգրկել հատկապես ՔՀՑ ներկայացուցիչներին:

ՀՀ Վարչապետ, համակարգող խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը, ամփոփելով քննարկումը, նշեց, որ ներկայացված ցանկով անհրաժեշտ է համագործակցել յուրաքանչյուր նախարարության հետ՝ ճշգրտելու հանրային հատվածի ներկայացուցիչներ ներգրավելու անհրաժեշտությունը:

<u>Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ</u>

ՀՀ էկոնոմիկային նախարարի տեղակալ Մուշեղ Թումասյանը ներկայացրեց ԿԶԾ իրականացման ընթացքի, ակնկալվող արդյունքների, նպատակների և Ծրագրի ազդեցության գնահատման նպատակով մոնիթորինգի և գնահատման նոր, արդյունավետ համակարգի ներդրման ուղղությամբ նախատեսված մեխանիզմները:

Մասնավորապես, նիստի մասնակիցներին տեղեկացվեց, որ մոնիթորինգային համակարգը կմշակվի և կներդրվի ԿԶԾ հավելված հանդիսացող Քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրի շրջանակներում: Իսկ արդեն սկսած 2010 թվականից, ԿԶԾ ամբողջական վերանայմանը զուգահեռ, կվերանայվի և կամբողջականացվի նաև ԿԶԾ մոնիթորինգային համակարգը:

Միաժամանակ, հիմնավորվեց Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործողությունների ծրագրի և ԿԶԾ մոնիթորինգային համակարգերի միասնականացման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով այն փաստը, որ երկրում բարեփոխումների հիմնական ուղղությունները կապված են ԵՀՔ և ԿԶԾ ծրագրերի իրականացման հետ և կատարվում են նաև այդ ծրագրերի ներդաշնակեցման աշխատանքները: Այս ուղղությամբ անհրաժեշտ է բոլոր համապատասխան գերատեսչություններում ստեղծել միասնական մոնիթորինգային միավորներ, որոնք կիրականացնեն մոնիթորինգային աշխատանքներն այդ երկու ծրագրերի ուղղությամբ և հաշվետու կլինեն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում ձևավորված միասնական մոնիթորինգային ստորաբաժանմանը՝ հաշվի առնելով այն փաստը, որ տվյալ ծրագրերի իրականացման պատասխանատուն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է:

<u>Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ</u>

ՔՀՑ ներկայացուցիչ Կարինե Դանիելյանը հանդես եկավ հաղորդումով: Լինելով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին նվիրված համաժողովի աշխատանքների մասնակից՝ Կ.Դանիելյանը նիստի մասնակիցներին տեղեկացրեց դրա արդյունքների վերաբերյալ: Մասնավորապես, այն եզրահանգումները, որոնք արվել էին նեոլիբերալ քաղաքականության բացթողումների, աղքատության մակարդակի, ազատ շուկայի անվերահսկելիության և հակաճգնաժամային քաղաքականությունների առնչությամբ:

<u>ՈՐՈՇՎԵՑ</u>

1. Հավանություն տալ ԿԶԾ «2010-2011 թվականների քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրի» իրականացման առաջարկին:

   ԿԶԾ քարտուղարությանը հանձնարարել լրամշակել ներկայացված նախագիծը՝ կատարելով հետևյալ փոփոխությունները.

   ա/ ճշգրտել առաջարկվող ժամանակացույցը՝ ծրագրի իրականացման մեկնարկը համապատասխանեցնելով սույն նիստի անցկացման օրվան,

բ/ ՀՀ արդարադատության նախարարության հետ քննարկել ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 1207-Ն որոշման հավելվածով ընդունվելիք 2010-2011 թվականների քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրի գործողության ժամկետի ողջ ընթացքում Կայուն զարգացման ծրագրի գործողության իրավական ձևակերպման հարցը:

2. Հաստատել ԿԶԾ Աշխատանքային խմբի կազմը և աշխատակարգը:

   ԿԶԾ քարտուղարությանը հանձնարարել լրամշակել աշխատանքային խմբի կազմը՝ այն համալրելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արտեմ Ասատրյանի մասնակցությամբ:

3. Համապատասխան նախարարությունների ու գերատեսչությունների քաղաքականության մշակման կոլեգիալ մարմիններում, ըստ անհրաժեշտության, ընդգրկել ԿԶԾ ՔՀՑ ներկայացուցիչների՝ ներկայացված ցանկին համապատասխան:

4. Ընդունել ի գիտություն.

   ա/ ԿԶԾ մոնիթորինգի և գնահատման համակարգի արդյունավետության բարձրացման, ինստիտուցիոնալ հիմքերի ամրապնդման, ինչպես նաև ԿԶԾ և ԵՀՔ գործողությունների ծրագրի մոնիթորինգի համակարգերի միասնականացման ուղղությամբ ներկայացված մոտեցումները,

   բ/ Կ.Դանիելյանի հաղորդումը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի թեմայով համաժողովի աշխատանքների արդյունքների վերաբերյալ:

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ**